

ՅՈՎՆԱՆ ԱՐՔ։ ՏԷՐՏԷՐԵԱՆ



ՀոԳՈՒ ԿԱԹԻԸՆԵՐ

<u>Աղօ</u>թագիրք



DROPLETS OF THE SOUL

Prayer Book











ՏԷՐ եւ ՏԻԿԻՆ ԺԻՐԱՅՐ եւ ՓԱԹՐԻ**Հ**ԻԱ ԹՐԲԱՆՃԵԱՆՆԵՐՈՒՆ

20£1

«Ագերս դեպի լեռևերը պիտի վերջևեմ ուրկե իմ օգևութիւևս պիտի գայ։ Իմ օգևութիւևս Տիրոզմեն է, որ պիտի գայ, որ արարիչև է երկիևբիև եւ երկրիև» Մաղմոս 121:1-2



Dedicated to
Mr. & Mrs.
GERALD & PATRICIA
TURPANJIAN

"I lift up my eyes to the mountains where does my help come from? My help comes from the LORD, the Maker of heaven and earth."







ԵՐԿՈՒ ԽՕՍՔ



Սիրելի ընթերցող,

Սոյն հաւաքածուի մէջ զետեղուած են Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցու ԱՄՆ-ի Արեւմտեան Թեմի Առաջնորդ Գրշն. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի քարոզգրքերից եւ Հոգեշունչ Մանրապատումներից քաղուած աղօթքներ, որոնք առաջնորդ Սրբազան Հայրը յանձնել է թղթին իր ծառայական կեանքի բազում տարիների ընթացքում։

Աղօթքները դասակարգել եմ առաջնորդուելով որոշակի տրամաբանական յաջորդականութեամբ եւ ոչ` ժամանակագրութեամբ։

Միրելիներ, իմ համեստ խնդրանքն է, որ մեզանից իւրաքանչիւրը պատշաձ գիտակցումով մօտենայ եւ ըմբոշխնի Մրբազան Հօր հոգու կաթիլներից գոյացած այս լձակի անաղարտ ջրից։

Ի ՔՐԻՍՏՈՍ՝ Հայկ Մ.

26 Մարտ, 2013





FOREWORD



Dear reader,

Included in this collection are a series of prayers selected from the book of sermons and Spiritual Reflections authored by His Eminence Archbishop Hovnan Derderian, Primate of the Western Diocese of the Armenian Church of North America throughout his pastoral tenure.

I have classified the prayers according to the relevant subject matter and have not based it on a chronological timeline.

It is my sincere wish that you read this prayer book with the proper mindset and relish Archbishop Derderian's captivating spirituality.

IN CHRIST

Hayk M.

March 26, 2013









Դժմմ4ተጫ4በԾԱՐՂՀՂՈւժ ՄՎՍԱՄ ՎՋ-ՊՕՐԱ

«Աղօթքը մարդուս հոգեկան շնչառութիւնն է...»:

Աղօթել կը նշանակէ մեր հոգին բանալ եւ առ Ասփուած ուղղել մեր խօսքը։ Այս քայլը կը թելադրէ ապրիլ Ասփուծոյ հետ. լսել Անոր կենարար պատգամները եւ առաջնորդուիլ Ասփուծոյ գծած ճանապարհէն։ Քրիսփոս, Ասփուածորդին Իր երկրաւոր կեանքը առաջնորդեց աղօթքներով եւ առանձնացումներով, նաեւ այն սպասումով, որ Իր առաքեալներուն առջեւ բանար աղօթքի կեանքի ճանապարհը։

Աղօթել կը նշանակէ նաեւ լուսաւորւիլ, սրբուիլ եւ լեցուիլ Ասփուծոյ շունչովը։ Քրիսփոնեայի կեանքին մէջ աղօթքը մնայուն հոգեւոր շարժում մըն է, որուն պահանջըն ու կարիքը մենք բոլորս ալ ունինք եւ կը զգանք։ Ինչպէս արեւը կը լուսաւորէ երկիրը, այնպէս ալ արեւի լոյսի նման քրիսփոնեայ մարդը պէպք ունի աղօթելու, որպէսզի իր անձը լուսաւորէ, սրբուի եւ լեցնէ ասփուածայինով։ Ուրեմն մեր հո-

գեւոր կեանքը պէտք է մշակուի աղօթքով, որպէսզի մեր կեանքը պայծառակերպուի այնպէս մը, որ ոչ միայն մեր ձեռքերը խառնենք Ասփուծոյ սուրբ գործին մէջ, այլեւ՝ մեր կեանքը խօսի Ասփուծոյ մասին։

31 Зпіјри, 2011

Աղօթքը` մարդը կը փանի հորիզոնէն անդին։ Ուրիշ խօսքով, աղօթքը մեզ կ՚առաջնորդէ ըմբռնելու, հասկնալու եւ վայելելու ոչ միայն փեսանելին ու շօշափելին, այլեւ անփեսանելին` փիեզերքը իր բոլոր սփորոգելիներով։ Իսկ անփեսանելիներու մէջ կայ Անփեսանելին, որն Ասփուած Ինք է, եւ որուն ներկայութիւնը կրնանք զգալ, ապրիլ, վայելել միայն աղօթքով։

Աղօթքը կը սկսի մարէն, եւ մարէն դեպի սիրա աանող ճանապարհորդութեան նախապատրասարութիւնն է։ Սբ. Յովհան Ոսկեբերան Հայրապետ երբ կը խօսի աղօթքի այս երկրորդ հանգրուանին մասին կ'ըսէ. "When you discover the door of your heart, you discover the gate of heaven." «Երբ կը հասնիք Ձեր սրտի դրան,

այն ժամանակ հասած կ'րլլաք երկնքի դրան»։ Ահա այս պահուն եւէթ կը սկսի աղօթքի կեանքին ամենէն խորհրդաւոր պահը, երբ անհամբեր կը սպասենք դիմաւորելու Անտեսանելին` Աստուած։ Ճըշ-մարտապես, աղօթքի այս կեանքը մեզ կը տանի նաեւ հաւատքի դրան առջեւ, որովհետեւ մէկ երեւոյթ է խօսիլ հաւատքի մասին, եւ մէկ այլ երեւոյթ եւ ճշմարտութիւն աղօթքի առաջնորդութեամբ հասնիլ հաւատքի այն մակարդակին, որուն համար բառերով տրուած բացատրութիւնը բաւական չէ։

20 Մարտ, 2013 Քէնթըրբերի

Աղօթքը՝ զԱստուած փնտոելու ներքին անկեղծ փափաքն է։ Սա հիմնական զգացողութիւն մըն է, որով կ'ուզենք գտնել արմատը մեր կեանքի, տուիչը մեր կեանքի։ Այս զգացողութիւնը մեզ կ'առաջնորդէ աղօթելու. այս պահուն եւէթ կը հաստատուի կապը Աստուծոյ հետ, երկխսսութիւնը՝ Աստուծոյ եւ մարդուն միջեւ։ Եւ ինչքան կը զարգանայ այս երկխսսութիւնը մեր եւ Աստուծոյ հետ, ապա այն-

քան եւս կը զգանք, որ կը բարձրանանք հոգեւոր կեանքի նոր մակարդակի մը վրայ։ Աղօթքը այս հասկացողութեամբ ալ ներքին վիճակ մըն է ուղղուած առ Ասփուած եւ նոյնժամայն ուղղուած աշխարհին։

Ուրեմն, աղօթքին մեկնակէտր Աստուած է, որ մեզմէ կր պահանջէ կեդրոնացում եւ լարափելութիւն, որպէսգի առանց յապաղումի եւ շեղումներու հասնինք մեր նպատակակէտին՝ լաջողցնելու մեր կապր Աստուծոլ հետ։ Խորքին մէջ ճշմարիտ եւ իրական աղօթքը կը սկսի Ասփուծոյ հետ հանդիպման պահէն սկսեալ, իսկ մինչեւ այդ կափարուածը նախապափրասփութիւնն է։ Այնպէս ինչպէս ինքնաթիռը մինչ իր թռիչքը իր ուժերու առաւելագոյն լարումով կր պատրաստուի բարձրանալ տիեզերք, ապա այդ ձեւով այ պատրաստութիւն կր կափարուի մեր էութեան մէջ։ Եւ լանկարծ դէմ առ դէմ ենք Աստուծոյ հետ։ Աղօթքի պահն է այդ։

20 Մարտ, 2013 Քէնթրրբերի









ԱՐԵՒԱԾԱԳԻՆ` ԱՂՕԹՔԻՆ ԾՆՈՒՆԴԸ ՀՈԳԻՒՍ ՄԷՋ

Ասփուած իմ, Քեզի կը բանամ իմ հոգիիս ծալքերը, որպէսզի այնտեղէն դուրս բերեմ իմ սէրը, որուն արմատն ես, եւ այն կարողանամ առատօրէն բաշխել բուրո անոնց, որոնք առաւօտեան արշալոյսի մը սպասումը ունին իրենց հոգիներուն մէջ։ Եւ գիտեմ, որ աղօթքի մէջ լուսաւոր է հոգիս եւ անանձնական ուրախութեան մէջ իր բարձրակէտին է հասած։

18 Դեկտեմբեր, 2011









ՎՈԼԺՄԱՄՆ ՄՎՂՈՄ ՂԶ-ՊՕՐԱ Է ՄԶԱՓԱՓ ՄՎԶՂԺՄ

Փառք Քեզ ամենակարող Ասփուած, որ Քու անսահման սիրոյ մէջ կը նորոգես բոլորիս կեանքը՝ նորին հասնելու ներքին փափաքով։ Այս բարի ձգփումով ապրող մարդը կ՚ուզեմ դառնալ, քանզի քաջ գիփեմ, որ դէպի Քեզ փանող ձանապարհը լոյսին կ՚առաջնորդէ ինձ։

18 Uuphi, 2011











ԱՂՕԹՔԸ ՄՄԺԳՎՈՑՂՄՄԾՃ ՎՈ ՄՎՍՅՈԼ Հ ՄՆՎՈ ՐՌԴՂՈՄԶԱԴԱ

Լսէ՝ մեր ձայնը աղօթքի Տէր Ասփուած, որ մեր սրփի խորերէն Քեզի կ՚ընծայենք։ Լսէ՛ մեր ձայնը աղօթքի, ու խաւարի մէջէն խարխափող մարդը առաջնորդէ դէպի լոյս եւ ճշմարփութիւն։ Դուն որ ամենակարողն ու ամենաբաւական Տէրն ես, բոլորիս համար Քու սուրբ Խորանի առջեւ երկրպագութեամբ նորոգէ իւրաքանչիւրիս կեանքը, որպէսզի գործենք այն ինչ որ Քու բարեսէր կամքն է։ Ամէն։

2012









ՀՂՍՆՈՆ ՂԳՊՕՐՍ ՄՈՆՍՑ ՆԱԺՊՎՈՂՈՎՍՍԱՐՍ Է ՄՎՈՐՄ

Տէր Ասփուած հարցն մերոց, օրհնէ՛ մեր Սբ. Եկեղեցին ու ազգն Հայոց, որպեսզի լուսաւորչահաստատ հաւատքով, Սահակ-Մեսրոպեան տեսիլքով, Շնորհալիի, Նարեկացիի աղօթքով ու տակաւին անթիւ անհամար հաւատաւոր հոգիներու խոնարհ սպասաւորութեամբ առլեցուն հոգիներէն միութեան զգաստացնող հրաւէրին պատասխանենք աղօթքով ու երկիւղած սրտով, որպեսզի սերունդներուն, որպես անկորնչելի ժառանգ, թողունք Աստուածահաստատ Հայց. Եկեղեցին՝ իր նուիրական առաքելութեամբ եւ մանաւանդ, որպես մեծագոյն տուրքը յարգանքի Եղեռնի, մեր անթաղ նահատակներու յիշատակին։

17 < ոկսրեմբեր, 2011








ԱՂՕԹՔԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԵՂԱՆԻՆ ՄՕՏԵՑՆՈՂ ՄԱԳՄԱԳՄԵՆ Է

Տէր Ասփուած, հասփափուն պահէ այս փունը։ Պահպանէ Քու հաւափացեալներդչար փորձանքներէ, լուսաւորէ անոնց հոգիները Սուրբ Հոգիի շնորհներով, որպէսզի անոնց կեանքը դառնայ ամենագեղեցիկ ընծան Քու Սուրբ Սեղանին. ամէն։

5 Uuphi, 2010









Քանի պատարագներու առաջնորդութեամբ դէպի Քեզ ընդառաջ եմ եկած Քրիստոս Աստուած։ Ինչքան մօտեցած եմ Քեզի, այնքան եւս միշտ զգացած, որ ճանապարհը դեռ կ'երկարի։ Գիտեմ, քաջ գիտեմ, ոչ թէ Քու ներկայութիւնդ է որ կը հեռանայ ինձմէ, այլեւ՝ իմ տկար էութեանը մէջ կը զգամ, որ շատ աղօթք ու լռութիւն պէտք է վերառաքեմ Քեզի, որպէսզի արդար իրաւունքն ունենամ ըմբոշխնելու ներկայութիւնդ։

Մբ. Պապարագներու առաջնորդութեամբ դէմ յանդիման կը զգամ Քեզի հետ Քրիստոս Աստուած իմ, որ հոգու ամբողջ զօրութեամբ, անկեղծ հաւատքով սրտիս խորերէն խօսք կը վերընծայեմ Քեզի, քանզի քաջ ու համարձակ հաւատքով կ'ապրիմ ներկայութիւնդ եւ հոգիիս մէջ ծնունդ առնող շարժումը նոր կեանքին։

Աւագ Հինգշաբթի է եւ անգամ մ'եւս Մբ. Պատարագով կը բացուի իմ առջեւ հոգեւոր ճանապարհորդութիւն մը դէպի Քեզ եւ Քեզի հետ ճանապարհորդութիւն մը դէպի նոր կեանք։ Օրհնուած կը զգամ որ իմ մանուկ հասակէն իմ հոգիին մինչեւ խորերը հասփափեցիր հաւափքը, այն բանալին, որով կը բանամ հոգիիս դռները, ուրկէ ներս մփնելով եւ Քեզի հետ հաղորդակցութեամբ կը սկսիմ նոր կեանքս։

23 Մարտ, 2013 Միաթըլ





ԱՂՕԹՔԸ ՄԱՐԴԸ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ԵՄԵՐԱՐԱՄԻՆ ՀՈՍՑԱՊԸՊԱԳ

Մարդասէր Տէր, շնորհէ՛ որ ամբողջ սրփով ու մփքով սիրենք Քեզ. եւ հոգու ամբողջ զօրութեամբ նուիրուինք Քու պատւիրաններու գործադրութեան։ Մեր ձեռքերը Քեզի կը բարձրացնենք, արժանանալու Քու շնորհքիդ եւ ողորմութեանդ, որպէսզի մեր առաքինի գործերուն մէջ յաջողութիւն գտնենք, որովհետեւ Դուն ես մեր կեանքին Տէրը, ողորմած Ասփուած, եւ Քեզի կը վայելեն փառքը, իշխանութիւնն ու պատիւը, յաւիտեանս։ Ամէն։

2012









ԱՂՕԹՔԸ ՄԵԶ ԿԸ ԴԱՐՁՆԷ ԼՈՅՍԻ ՈՐԴԻՆԵՐ

Սուրբ ես Տէր զօրութեանց։ Քու սրբութեանդ առջեւ բացայայփ է մեր հոգեւոր կեանքի բոպիկութիւնը։ Առաջնորդէ՛ մեզ մշտապէս դէպի աղբիւրը լոյսին, որպէսզի երկնափուր փուրքը՝ որ կեանքն է ինքնին մեզ դարձնէ լոյսի որդիներ։

7 Umpy, 2011











ԱՂՕԹՔ ԲԻ ԻՍՍՎՍԻՐ

Աստուածգիտութեան ուսումը եւ Աստուծոյ հետ հաղորդակցութիւնը անտարակուս երկու տարբեր հանգրուաններ են հաւատացեալի կեանքին մէջ։ Մէկը՝ ճանապարհորդութեան ընթացքն է, իսկ միւսը՝ մեկնակէտին հասած ըլլալու պահը։

Ասփուած իմ, իմ աղօթքներուս մէջ Քեզ կը գտնեմ։ Գտած եմ Քու անյաղթելի ներկայութիւնը ոչ թէ տեղերու մէջ, բայց ամենէն աւելի էութեանս մէջ։ Գուցէ երբեմն հոգեւոր ճանապարհորդութեանս ընթացքին ունիմ խարխափումի պահեր, բայց նոյն խարխափումներուն առթած արկածներէն սթափած՝ Քու լոյսին ողողումով քայլերս կ՝ուղղեմ Քեզի։

10 Դեկտեմբեր, 2011





ԱՂՕԹՔԸ ՀՈԳԻԻՆ ԴՈՒՌԸ ԲԱՑՈՂ ԲԱՆԱԼԻՆ Է

«Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմէ երկեաց, Տէր ապաւէն իմ, ես յումմէ դողացայց»:

Տէր իմ Ասփուած, հոգիիս դռները լայնօրէն բացած կ'ուզեմ զգալ էութեանս մէջ Քու անսահմանելիութիւնդ։ Ինչքա՛ն լոյս կը բերէ Քու քաղցր Անունդ իմ կեանքի մէջ, որուն առաջնորդութեամբ Քեզի կ'ուզեմ բերել ոչ միայն իմ ընծայումները, այլեւ՝ իմ կեանքի հոգեւոր ճանապարհորդութեան ընթացքը կ'ուզեմ դարձնել նաեւ հրաւէրի կոչ մը Քեզմէ հեռու մնացողաց համար։

Տէր իմ Ասփուած, Դուն իմ լոյսն ես ու կեանքը, եւ ես Քեզմով կը զգամ այն-քա՛ն հարուսփ` մերժելով վախը եւ յուսա-հափութիւնը։

Տէր իմ Ասփուած, Դուն իմ կեանքի ապաւէնն ես, եւ ես պատճառ չունիմ ընկրկումի կեանքի փորձութեանց դէմ։





ԱՂՕԹՔԸ ՄԵՐ ՀՈԳԻԻՆ ՊԱՏԿԵՐՆ Է

Տէր Ասփուած. լուսազարդ երկնքի ասփղերու մէջ Քեզ հետ կը վերսկսիմ իմ երկիսսութիւնը։ Սրտիս խորերէն նորովի աղօթք կը վերառաքեմ Քեզի եւ հազար փառք կու տամ, որ էութիւնս Քեզմով հարուստ կը զգայ։ Նոյն զգացողութեան առաջնորդութեամբ իմ սէրն ու ծառայութիւնը կ՚ուզեմ աւելի առատաբաշխ բերել Քու ժողովուրդիդ, որուն առջեւ խոնարհած է հոգիս։ Բայց աւելին` Քու ժողովուրդիդ մէջ կը տեսնեմ Պատկերդ, ու անգամ մը եւս նոր ուխտ կ՚ուզեմ կնքել Քեզի հետ, որպէսզի սիրեմ Քեզ իմ ամբողջ հոգով, ու սիրեմ Քու ժողովուրդդ անվերապահօրէն։

29 3nılınımp, 2012





ԱՂՕԹՔԸ ԽԱԿԱՐԻ ՄԷՋԷՆ ԼՈՅՍԻ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆ Է

Ասփուած իմ, երբ բառերը փողանցելէ դադրին իմ շրթներուն վրայ, ապա լռութեան մէջ կ՚ապրիմ Քու խորհուրդը։ Գիշերուան լռութեան ժամերը կարծես ճանապարհին ըլլան իմ կեանքին, երբ օրուան խաժամուժէն խաղաղած իմ հոգին կը բանամ Քեզի ու սրփի խորերէն բառերս խունկ ու աղօթքի նման Քեզի կ՚ուզեմ ընծայել։

Քու ձեռքերուդ մէջ ահա կը դնեմ իմ խոնարհ կեանքը, որպէսզի առաջնորդես դէպի նոր ու առաւել կեանք, որուն ծնունդը կը վերապրիմ ամէն անգամ, երբ երկինքէն երկիր կը խոնարհի Քու Միածին Յիսուս Մանուկը։

2 3niliniup, 2012









ԱՂՕԹՔԸ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ ՕՐՀՆԵՐԳ ՄԸՆ Է

Գիշերուան մէջ խպացած լոյս մը կայ, որուն իմ հոգու աչքերը յառած կը մնան։ Այդ լոյսը Դուն ես Ասփուած իմ։ Քեզի կը դիմէ հոգիս, որովհետեւ օրն իր աւարտին վերջակէտ կ՚ուզեմ կնքել Քու հզօր Աջիդ առաջնորդութեամբ, որպէսզի արեւածագին հետ իմ շրթներուն վրայ արտասանւած առաջին բառերն ըլլան Քեզի ձօնուած օրհներգութիւն. «Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս ըո»։

2 Bnihnimp, 2012









ACUUPULT, SUSA ACUALSUFAFA

Ճշմարիպ լոյսն ու ճանապարհը Դուն ես Քրիսպոս Ասպուած մեր։ Քու յաւիպենական խօսքին առջեւ խոնարհած կեանքերը դէպի լոյս կ'առաջնորդեն, որպէսզի մշփապես փարուինք ճշմարպութեան, որ երկինքէն իջած երկնային իմասպութիւնն է։ Եւ ինչպէս առաքեալները հաւաքեցիր շուրջդ, ահա այդ նոյն հրաւէրին կ'անսայ հոգիս, որ խաւարի ճանապարհներուն մէջ թէեւ խարխափումներով կը հասնի Քեզի, ու Քու էութեան մէջ կը պեսնեմ իրական պատկերը հոգիիս։ Սա այն պահն է, ուր իմ էութեանը մէջ կը զգամ ու կ'ապրիմ հոգեւոր վերածնունդը ասպուածապարգեւ կեանքիս։

13 Դեկսրեմբեր, 2012







ՆՎՈՑՎՆԺՄԱ ՆՎԻԳՎՈՐԱՐԱՄԱ



Տէր իմ Ասփուած, սրփիս խորերէն աղօթք կը բարձրացնեմ Քեզի եւ փառք կու փամ այն բոլոր բարիքներուն համար, որ իմ կեանքին մէջ դարձուցած ես առափ օրհնութիւն ու խաղաղութիւն։

Առաւօպեան արեւածագէն մինչեւ գիշերուան մէջ բացուած լոյսին մէջ պարփակուած կեանքիս մէջ ամէն վայրկեան կը նայիմ շուրջս եւ կը պեսնեմ ու կը վայելեմ այն բոլորը, որոնք Քու ձեռակերպն են, եւ որոնց մէջ կը գպնեմ Քեզ` Ամենա-զօր Ասպուած։ Ու բոլորին մէջ կ'առանձնանայ Մարդը, որ կապարելապիպն է Քու սպեղծագործութեան։

Մարդուն մէջ պէտք է տեսնել Քու աստուածային բնութենէն կրակ մը ու ճառագայթումը Քու սիրոյն, որը կը բորբոքի նաեւ իմ մէջ։ Պիտի պահեմ այդ կրակը, որպէս յոյսը իմ կեանքի, հաւատքի կայծը՝ որն ամէն օր նոր կեանք կը պարգեւէ ինձ, որպէսզի Քեզի ծառայեմ նորովի ոգեւորութեամբ եւ խոնարհիմ մշտա-





ալէս Քու ահաւոր Մեծութեանդ առջեւ ժողովուրդիս ծառայութեան ճանապարհին։

Փառք Քեզ Ասփուած։ Խաղաղութիւն ամենեցուն։

13 Դեկտեմբեր, 2012









ሀጊዐጮደር ወበጫቦԿሀԾ ረበዓትドレ 🦠 **ԲԱԼԱՍԱՄՆ Է**



Երկնաւոր Հայր, Քու անունդ օրհնեալ ոլլալ։ Հոգեղէն ու հողեղէն բոլոր արարածները անդադար կ'օրհնաբանեն Քեց։ Եւ ես, թու խոնարհ եւ թշուար ծառադ, ինչքան կ'ուզեմ ինքզինքս միախառնել անոնց եւ իմ կարկամեալ հոգիիս ու մարմնիս ամէն մէկ բջիջովը նոյն օրհնութիւնը վերառաքել Քեզի։

Սա աղօթքին մէջ կր տեսնեմ փոթորկած հոգիիս պատկերը ու աղօթող սուրբին կ'ուցեմ միացնել կարկամեալ հոգիիս ձայնը՝ առ Աստուած վերառաքելու համար խնդրանքը, որպէսգի գիշերուան այս լրութեան մէջ իմ հոգիիս մէջէն եւս արձագանգէ այն փրկարար մրմունջը աղօթքի, որուն մէջ կ'օրհնաբանուի Աստուած՝ hnգեղէն ու հողեղէն արարածներուն կողմէ անդադար։ Ես ալ ի բոլոր սրտէ կ՚ուզեմ ինքզինքս միախառնել անոր եւ իմ կարկամեալ հոգիիս ու մարմնիս ամէն մէկ բջիջովը նուն օրհնութիւնը վերառաքել Քեցի՝ Աստուած իմ եւ Stn իմ։





Բայց անձկութեան մէջ է հոգիս. վախու դագնապ բռներ են զիս եւ չեմ հասկընար, ո՛վ Տէր, թէ ինչո՞ւ այսքան ցաւ ու դառապանք, այսքան վիշտ ու նեղութիւն ինծի բաժին դարձուցիր։ Արդեօք անո՞ր համար, որ ուխտեցի հարազատ ու հնազանդ որդի մը ըլլալ քեզի. արդեօք անո՞ր համար, որ ուզեցի Քու Միածին Որդիիդ հետքերով ընթանալ։

Ներէ՛ ինծի, ով գթած Հայր, որ կր փորձեմ՝ բայց չեմ հասկնար Քու կամքո ինծի համար։ Մերբով մթագնած մահկանացուներուս միտքը, Քու լոյսէդ ու անմիջական հաղորդութենէդ կտրուած, չի կրնար հասկնալ ինչ որ դուն կր կամենաս ու ինծի համար պատրաստեր ես։ Բայզ հոգիիս ամբողջ գօրութեամբ լօժար եմ ես Քու կամքիդ յօժարութիւնս ընդունէ՛, Տէ՛ր, անուշաբոլը գոհի պէս։ Կեանքս քուկը է, Քեզի կու փամ, չունիմ Քեզի արժանի ընծայելիք որեւէ բան, եթէ ոչ միայն՝ սէրը, սիրոյդ դիմաց. ընդունէ՛ զայն Քու ընծայած փրկութեանդ բուրվառին մէջ՝ սիրոլ հուր Միածին Որդիիդ միացած, անուշահոտ խունկի պէս։





Տո՛ւր, որ հասկնամ անքննելի Քու կամքդ, Հա՛յր իմ սիրելի։ Կը փորձե՛ս զիս իբրեւ որդի, որպէսզի իմ մէջս առաքինութիւններու ադամանդը յայպնես. եթէ այդ է, այնպէս ըրէ՝ որ փորձութեան կսկիծին մէջ եւ չարին այլասերող ոյժին դիմաց՝ դառնութեամբ ու չարով չպղպորի իմ հոգիս, այլ զօրացո՛ւր զիս եւ թոյլ պուր՝ որ իմ պկար միպքիս համար անհասկնալի եւ գերիվեր արդարութեանդ պապմողը ըլլամ ու ձշմարպութեանդ եւ իրաւունքին հաւապարիմ մարպիկը մնամ։

Սուրբ աղօթողի բառերուն մէջ կը խաղաղի իմ հոգին։ Այս երեկոյ խարխափումներէ յոգնած կը հանգչի սիրփս քանզի կը զգամ որ ինծի հետ ես Դուն, Աստուած իմ, սրտեր քննող, գիտես իմ խորհուրդներուն ծալքերը։

Տէ՛ր իմ Ասփուած, սուրբին աղօթքը՝ նոր աղօթքի կը վերածուի հոգիիս մէջ։ Անոր աղօթքը կը դառնայ խօսքը՝ հոգիիս, որուն մէջ կ՚ուզեմ խեղդել խռովքն ու անձկութիւնը, որպէսզի յափշփակուիմ Քու լոյսովդ։ Ու շարականին բառերը, որոնք այնքան հազար անգամ դարձած են

սնունդը հոգիիս կ՚ուզեմ կրկնել նոր շեշդով. «Լուսով ասփուածութեան քո Քրիսդոս, լուսաւորեցեր սուրբ զեկեղեցի, պահեա՛ զսա անշարժ յաւիփեան»։ Չէ՛ որ բջիջ մըն ալ ես եմ Քու եկեղեցիիդ մէջ։ Ու քիչ վերջ պիփի քալեմ դէպի Քու լուսոյ խորանը, որպէսզի անոր առջեւ ծնրադիր ու նոր մոմեր վառած շարունակեմ քաղել սուրբին աղօթքը, զի այդ աղօթքին մէջ նոր միութիւն մը կը հասփափուի Քու եւ իմ միջեւ։

Անդրադարձի առի՛թ կու փաս, որպեսզի յիշեմ հաւափքի իմ կոչումս, շնորհէ՛ որ ճանչնամ Քու շնորհքդ, եւ նեղութիւններուս փագնապին մէջ իսկ Քու անունդ օրհնեմ ու փառաբանեմ Քու օրհնութիւնդ ժառանգելու համար։ Կը քննե՛ս զիս՝ Քու մաքրական ու սրբարար կրակիդ աղփեղախանձ բովին մէջ, եւ սրբութեան առի՛թ կու փաս, որպէսզի մարմնական չարչարանքներուս եւ նեղութեանց փորձառութեամբը դադրիմ այլեւս մեղանչելէ. պարգեւէ, որ այլեւս մոռնամ աշխարհային ցանկութիւնները, կեանքիս բոլոր օրերուն Քու կամքիդ համաձայն ապրիմ եւ Քու բազմափեսակ պարգեւներուդ տնտեսը դառնամ ուրիշներուն համար։ Քու Որդիիդ փրկագործական չարչարանքներուն մասնակի՞ց կը դարձընես անարժանս. ինչ գերազանց շնորհ է այս։

Տո՛ւր, Ասպուած իմ, պո՛ւր որքան որ կամենաս, թող Քու օրհնեալ կամքդ ըլայ։ Բայց անոնց հետ միասին՝ մխիթարիչ Սուրբ Հոգիիդ պարգեւներով թո՛յլ պուր որ ուրախութեամբ կարենամ ընդունիլ եւ կրել զանոնք, մեզի համար Քու պատրաստած անպատմելի փառքիդ մէջ տեսնեմ երկրի վրայ Քու փառաւորումդ, Որդին, եւ Սուրբ Հոգիին հետ միասին. այժմեւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն»։

29 Նոյեմբեր, 1996 Թորոնթօ





ՄՂՕԹՔԸ ՕՐՀՆՈՒԹԵՄՆ ԱՆՁՐԵՒԱՑՈՒՄՆ Է ՄԵՐ ԱՌՕՐԵԱՅ ԳՈՐԾՈՑ ՄԷՋ

Շնորհէ մեզի, ով Տէր, որ Քու Սուրբ Հոգիդ առաջնորդ ըլլայ մեզի եւ արդիւնաւորէ մեր որոշումներն ու ծրագիրները մեր Ծուխին բարիքին համար։ Գոհութիւն կու դանք Քեզի բոլոր այն օրհնութիւններուն համար, զորս մեզի պարգեւեցիր անցեալ դարուան ընթացքին եւ կ'աղօթենք, որ մենք՝ Եկեղեցւոյ անդամներս, կարենանք միասնաբար գործել առաւել ոյժով եւ եռանդով յառաջիկայ դարեշրջանին։

Օգնէ՛ մեզի, ով Տէր, որ մեր անձերը ընծայենք Քեզի եւ պատրաստ ըլլանք զոհելու մեր ժամանակը, դրամը եւ տաղանդը Քու Սուրբ Փառքիդ եւ Թագաւորութեանդ տարածման համար։ Առաջնորդէ մեզ, կ՚աղաչենք Քեզի, Եկեղեցւոյս Ծխական Խորհուրդի, Թեմական Պատգամաւորներու եւ Վերստուգիչ Յանձնախումբի անդամներու ընտրութեանց մէջ։ Շնորհէ որ նոր ընտրուելիք անդամները հաւատարմութեամբ եւ սիրով կատարեն իրենց պարտականութիւնները։

Կը գովաբանենք Քեզ, Տէր Ասփուած մեր, բոլոր այն ծառաներուդ համար, որոնք անձնուիրաբար գործած են Քու հոգեւոր այգիիդ մէջ ու պաշփած Քու Սուրբ անունդ։ Փառաբանենք Քեզ մանաւանդ անոնց համար, որոնք մեկնած են անդարձ եւ ննջած ի Քրիսփոս։ Անոնց յաւիտենական հանգիստ պարգեւէ, ով Տէր։

Ով Ամենակալ Տէր, Քու լոյսդ մշտապէս թող փայլի մեր վրայ եւ առաջնորդէ մեր քայլերը դէպի ճշմարտութեան ճանապարհը։

Դուն ով Տէ՛ր, գիտես մեր պէտքերը եւ կարիքները մեր խնդրածէն եւ հասկցածէն աւելի, եւ ՔԵԶԻ, ՈՐԴԻԴ ԵՒ ԱՄԵՆԱՍՈՒՐՔ ՀՈԳԻԻԴ հետ, կը վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։









REFLECTIONS ON PRAYER

"Spirituality is enlivened through prayer..."

To pray is to open our souls to and converse with God. In doing so, we live a life with the Almighty, we hear His divine messages, and pursue the path to righteousness. Christ, the Son of God, filled His earthly life with prayers and solitude and with the conviction that He would open before His Apostles the path to a prayerful life.

To pray is to also be enlightened, to be cleansed and to be filled with God's love. In the life of a Christian, prayer is a lasting spiritual movement, one which we all possess and feel. Prayer enlightens our spirituality just as the sun illuminates the world. Through Christ's divine gift of prayer, we are

enlightened and purified. Therefore, our spiritual lives must be cultivated with prayer in order that we may not only become the Hands of God in our earthly lives but may also glorify the Creator through our noble deeds.

July 31, 2011

Prayer takes us beyond the horizons. In other words, prayer allows for us to comprehend and enjoy not only the visible and the tangible, but also the entire invisible universe. Amidst the invisible exists the INVISIBLE – God, Himself, whose presence is felt through prayer alone.

Prayer is derived from a thought and is molded in the heart. St. John Chrysostom refers to the latter thought with the following words "When you discover the door of your heart, you discover the gate of heaven." From that moment on begins the most sacred journey of the prayer when we eagerly await the encounter with the invisible God. Rightfully so, a prayerful life is the gateway to faith. Indeed, it is one thing to preach about faith and it is another to be guided by prayer to a state of faith that is indescribable by words.

March 20, 2013 Canterbury, UK

Prayer is the inner search of God in its purest form. It is a preeminent feeling through which one searches for the source and the giver of life. It is this exact feeling which invites us to fervent prayer and creates an unbreakable bond between man and the Creator. As we develop the dialogue through prayer, we reach a new and an enriched state of

spirituality. Prayer is the purest form of inner expression directed to God and at the same time, to the world.

Therefore, prayer is centered on God. To avoid interferences and distractions, prayer requires of us great focus and sustainability, for it is the source of establishing a lasting bond with God. In reality, true prayer begins with our encounter with the Almighty and everything that occurs prior is the state of preparation. Just as an airplane requires great force and energy to prepare for lift off into the heavens, the same state of preparation occurs in our nature. And when we come face to face with God, that is the moment of prayer.

March 20, 2013 Canterbury, UK







SUNRISE PRAYER ORIGINATING IN MY SOUI



Dear God, I open my soul to You completely, in order to reveal my love originating from You and that I may selflessly share Your divine love with those whose souls eagerly await the morning sunrise. And I know that my soul is enlightened through prayer and it is at its pinnacle amidst the joy of others.

December 18, 2011









PRAYER IS THE DESIRE FOR RENEWAL

Glory to You, Almighty God, for with Your everlasting love, You fulfill our inner desire to be renewed. I wish to live my life with this noble aspiration, for I am deeply convinced that path leading to You leads me to the light.

April 18, 2011









S

PRAYER IS THE PATH TO LIGHT AND RIGHTEOUSNESS

Dear God, hear the prayer that we dedicate to You from the bottom of our hearts. Hear our prayer and lead those who are lost in darkness toward light and righteousness. Renew our lives O' Lord before Your Holy Altar, for You are the Almighty and All Benevolent God, and instill in our hearts the humility to live and act according to Your will. Amen.

2012









PRAYER AS THE CALL TO HUMILITY

God, our Father, we beseech You to bless the Armenian Holy Apostolic Church and the Armenian nation. Hear our heartfelt prayer that embodies the steadfast Christian faith of the Enlightener, the vision of St. Sahag - St. Mesrob, the prayer of Shnorhali and Naregatsi and Your numerous humble servants. In unison, we pray for the young generation of the humble servants of the Armenian Apostolic Church and the martyred generations of the Armenian Genocide.

October 17, 2011









PRAYER LEADS US CLOSER TO THE HOLY ALTAR

Dear God, preserve this house. Protect Your faithful from all things evil. Enlighten their souls with the divine grace of the Holy Spirit, in order that they may surrender their lives to You before Your holy altar. Amen.

April 5, 2010











THE SACRAMENT OF THE DIVINE LITURGY

As a celebrant of the Divine Liturgy, I have come before You, Christ, my Savior. The closer I get to You, the more I feel distanced from You. I am very well aware that it is not Your divine presence that deserts me. It is my weakness that makes me realize of my need for constant prayer and solitude in order for me to once again savor Your holy presence.

As a celebrant, I draw near You, Christ, my Lord, in order that I may dedicate to You my heartfelt prayer. It is with a strong conviction in my unwavering faith that I experience the sanctity of Your presence and the calling to a New Life which is sparked in my soul.





It is Maundy Thursday and through the Divine Liturgy a spiritual path leading to You is opened before me. Once again, You accompany me on my journey to a new life. I feel blessed that since my youth, You have instilled in heart my steadfast faith. You have given me the key which unlocks the door to my soul. Once I enter, I begin my new life in communion with You.

March 23, 2013 Seattle









PRAYER IS THE PATH WHICH LEADS MAN TOWARD GOD

Dear God, allow us to love you with all our hearts and minds. Grant us the wisdom to fulfill Your commandments with strengthened spirits. We lift up our hands to ask worthiness of Your grace and mercy in order that we may succeed in our noble endeavors, for You are the Lord of our lives, the All Merciful God and to You belong the kingdom, the power and the glory. Amen.

2012







PRAYER TRANSFORMS US INTO THE CHILDREN OF THE LIGHT

You are holy, O' God, Almighty. The frailties and shortcomings of our spiritual lives are revealed before Your holiness. Lead us to the source of light and allow Your divine gift of life to transform us into children of the light.

March 7, 2011









PATH AND THE LIGHT OF RIGHTEOUSNESS

You are the righteous light and the path, Christ, my Lord. Humbled before Your divine Gospel are the lives which have been illuminated. You have shared with us Your divine wisdom which is the path to righteousness. Call on me as You have called on Your Apostles to be surrounded by Your divine glory. Though through a tumultuous path, my soul is in search of You and yearns to reach You, for in Your presence I see the true reflection of my soul. This is the moment where I feel and live the reawakening of my God-given life.

December 13, 2012







#

PRAYER AND MEDITATION

"In prayer and meditation, you can spend a lot of time on techniques trying to know about God, but the real point of it is to know God." (Abp. Tutu)

Receiving a theological education and being in communion with God are two different aspects in a Christian's life. One refers to being on the path while the other refers to reaching the destination.

Dear God, I find You through my prayers. I have found Your unconquerable presence in the depth of my soul. Throughout my pastoral journey, I have encountered times of fear and despair; however, guided by Your light, I directed my steps to You.

December 10, 2011









PEACE UNTO ALL

God, my Savior, I deliver to You my heartfelt prayers and express my wholehearted gratitude for all good tidings You have bestowed upon me and have made me worthy of Your blessings and peace.

From the morning sunrise till the luminous moonlit sky, I embrace your bountiful gifts. Amidst these treasures, I find You, God, Almighty. In all of Your creations, Man is the most unique and the most perfect being. Man bears Your divine flame and is the bearer of your boundless love. This flame is rekindled in me and I must protect and cherish it eternally, for it is the light of my faith.

It is the source of new life which reawakens within me the humility to





serve Your people with renewed vigor and strength.

Praise be to You, my Lord.
Peace Unto All.

December 13, 2012











PRAYER IS THE KEY TO THE DOOR OF THE SOUL

"Lord, my light and my life, who should I fear,

Lord my refuge, from who should I tremble"

God, my Savior, with the doors to my soul wide open, I wish to savor the feeling of Your unfathomable glory. Led by sweetness of Your holy presence, which illuminates my life, I bring before you my heartfelt gifts. May the journey of my pastoral life become a call to unity to those who have been distanced from You.

Lord, you are my light and my life. With you I am strengthened and enriched for I reject all fear and hopelessness.

Dear God, you are the refuge I seek and with You, I have no reason to fall into temptation.





PRAYER IS THE MIRROR INTO OUR SOUL

Dear God, as I gaze into the starlit sky, I converse with You once again. I dedicate this prayer which was molded in the depth of my heart to You. I am thankful a thousand times for the spiritual treasure You have safeguarded in my soul.

With the same conviction, I share my love and continue to serve Your people, before whom my soul is humbled. Furthermore, I see Your holy image in Your people and wish to renew my covenant with You in order that I may love You with all my soul and love Your people, unconditionally.

January 29, 2012







PRAYER IS THE PATH LEADING FROM DARKNESS TO LIGHT



God, Almighty, if ever the day comes when I will be unable to utter words, I will embrace you in complete silence. After a day's work, my soul finds serenity in the night and I open the doors to my soul to You in tranquility offering you my words like the sweet scent of incense.

I surrender my life into Your holy hands in order that You may lead me to a new life – a life which is renewed with the Miraculous Birth of Christ, Your Only Begotten Son.

January 2, 2012









A PRAYER TO GOD IS A HYMN

In the still of the night, I gaze at a concentrated light. You are the light, my Lord. I surrender into the night beseeching your guidance in order that with the sunrise my lips can once again praise and glorify Your Holy name with the words "God, if my lips were to open, I would sing of your divine glory."

January 2, 2012









PRAYER IS THE REMEDY TO A TURBULENT SOUL

"Heavenly Father, blessed is Your name. All of Your creatures praise and glorify You. And I, Your humble and devout servant, gladly join them with the same vigor in extending to you the praise and the glory.

In this prayer, I envision my turbulent soul. To the praying Saint, I join my soul's restless voice and beseech from the Almighty to hear my prayer in the starlit night. And I, Your humble and devout servant, gladly join Your Creatures in praising and glorifying Your holy name, Christ, my Savior.

Yet my soul is restless. Fear and unrest accompany me and I cannot comprehend O' Lord why I must undergo such excruciating pain and suffering. Is it because I vowed to be your dear and loyal servant? Is it because I expressed a desire to follow in the footsteps of Your Only Begotten Son?

Forgive me, O' Merciful Father, for I do not understand Your will for me. A sinful mortal's thought is distanced from Your divine light and cannot understand what You have prepared for me. But my soul is prepared to accept Your will. Accept my preparedness, Lord as You would accept a martyred soul.

My life belongs to You. I surrender it to You. I cannot imagine giving to You anything more precious than love in exchange for Yours. Accept my love as the flame in the censer of salvation giving off the sweet scent of burning incense.





Grant me the wisdom to understand Your unquestionable will, my beloved Heavenly Father. Do you try me as a believer to reveal to me the gemstone of virtue that lies in me? If that is so, protect my soul amidst these trying times in order that I may refrain from evil thoughts and actions. Strengthen me and grant me the wisdom to speak of your righteousness at times when I cannot fully understand Your will and empower me, Your loyal servant to testify of Your endless power and glory.

My soul is comforted with the sacred words of the saint. The troubles of daily life are no longer worrisome, for my heart is rested in Your serenity and I feel that You accompany me.

God, Almighty, as the reader of souls, You know the depth of my soul. Strengthen me and grant me the wisdom

to speak of your righteousness at times when I cannot fully understand Your will and empower me, Your loyal servant to testify Your of endless power and glory. May these heartfelt words transform into the blood of my spiritual life.

Lord, Almighty, the prayer of the saint is molded into a new prayer which now rests in my soul. The prayer of the saint is the vivid expression of my soul wherein I bury my troubles and selfishness and rather fill it with Your divine light. And I repeat the words of the hymn which have nourished my soul throughout my life with You: "Christ, O Lord, with Your divine light, illuminate the Holy Church and keep her unshaken for eternity." And I, a small particle of Your Church, will soon approach the Holy Altar where I will recite





the prayers of the saint and reaffirm my closeness with You, the Creator.

You have granted me the wisdom to reflect on my calling. Pour forth into my heart the wisdom to recognize Your divine grace, and instill in me the strength to praise and glorify You in my times of despair and sorrow so that I may be worthy of Your bountiful blessings.

Will You cleanse and purify me so that I may cease from sin? Lead me so that I may forget and relinquish worldly desires. Guide me so that I may live each and every day of my life according to Your will and share your numerous blessings with others.

Will you include me, an unworthy servant, in the passion of Your Only Begotten Son, for such is the ultimate grace. Provide me with as much as You please. May Your will be done. Allow me to embrace Your bountiful gifts and to rejoice with the grace of the Holy Spirit. In Your indescribable glory, allow me to see be a witness to the praise which glorifies You, the Son and the Holy Spirit as one. Now and forever. Amen."

November 29, 1996 Toronto









PRAYER IS THE SHOWER OF BLESSINGS IN OUR DAILY DEEDS

Grace us, O Lord, the light of the Holy Spirit and guide us to make productive decisions for the prosperity of our Parish. We give thanks to You for all the blessings bestowed upon us in the last year and pray that you strengthen us, Your loyal servants, in order that we may collectively accomplish all that You have prepared for us in the upcoming year.

Help us, O Lord, to surrender our lives completely to You. Prepare us to sacrifice our time, money and talent for Your Divine Glory and grant us the strength to spread the Good News. We beseech You to lead us, as we elect the members of the Parish Council, the Diocesan Delegates and the Auditing

Committee. Grant the newly elected officers the wisdom to fulfill their duties with the utmost love and care.

We thank You, Christ, our Savior, for all the servants who have selflessly labored in Your Garden and have worshipped Your Holy name. We praise You especially for those who have departed from this earthly life and are no longer with us. Grant them Your eternal peace, O Lord.

Almighty and All Merciful God, may Your divine light shine on us and lead us to the path of righteousness.

Dear God, You are aware of our needs more so than we could ask and understand. And to YOU, YOUR SON and THE HOLY SPIRIT belong the power, the praise and the glory, now and forever. Amen.



